



ՀԱՅ ԵՒ ԱՂԴԲԵՋԱՆՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՏԼԻԿՏԻ ՄԱՍԻՆ

Էդգար Խաչատրյան, Վահագն Անտոնյան
«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009

ՀԱՅ ԵՒ ԱՂՐԲԵՋԱՆՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՏԼԻԿՏԻ ՄԱՍԻՆ

Էդգար Խաչատրյան, Վահագն Անտոնյան
«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված հրադադարից հետո 15 տարի է անցել: Այդ ընթացքում երկու երկրներում էլ նոր սերունդ է մեծացել: Այս երիտասարդները պատերազմի մասին լսել են շրջապատից, լրատվամիջոցներից կամ պատմության դասագրքերից, որոնցում յուրաքանչյուր երկիր իր պատմության ընթացքը յուրովի է մեկնաբանում:

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին հարաբերությունների ոլորտում ծառայած խնդիրների, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հնարավոր տարբերակների նկատմամբ երիտասարդների վերաբերմունքը պարզելու նպատակով «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն իր ադրբեջանական գործընկեր-կազմակերպությունների հետ համատեղ հարցում է անցկացրել երկու երկրներում: Ներկայացնում ենք ամենաբնորոշ պատասխաններից մի քանիսը, որոնք որքան տարբեր, նույնքան էլ նման են որոշ առանցքային հարցերում:

Մաբինա, 20 տ., միջազգային իրավունքի բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

Ադրբեջանի արտաքին քաղաքականության ամենակարեւոր եւ ամենատաջնային հարցերից եմ համարում Հայաստանի հետ հարաբերությունների պարզումը, Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ կայուն հարաբերությունների զարգացումը:

Ղարաբաղյան չլուծված կոնֆլիկտի առկայությունն, իմ կարծիքով, շատ վատ է անդրադառնում հասարակության վրա. մարդիկ մոռանում են սեփական պատմությունը: Դա նյարդայնացնում է նրանց, ատելությունն է գլուխ քարձրացնում: Համենայն դեպս, ինձ մոտ այդպես է:

Չնայած այն բանին, որ ես ոչինչ չեմ մոռացել եւ չեմ կարող մոռանալ, բայց դեմ եմ պատերազմական գործողություններին: Միայն դիվանագիտական ճանապարհով կարելի է լուծել Ղարաբաղի հարցը: Կարծում եմ՝ նույնիսկ եթե մենք ցանկանանք էլ պատերազմ, միջազգային կազմակերպություններն այն թույլ չեն տա:

Հակամարտության կարգավորման ուղղությամբ իշխանությունների կողմից տարվող քաղաքականությանը կողմ եմ. եթե հասարակությունը սատարի իշխանություններին այս հարցում, ապա հակամարտությունը հնարավոր կլինի լուծել խաղաղ ճանապարհով:

Գարիկ Պողոսյան, 23 տ., շուկայագետ

Ինձ համար ամենակարեւոր հարցը Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, ցեղասպանության ճանաչումն ու բռնի ուժով զավթված տարածքների վերադարձն է: Կարելոքում եմ նաեւ Ղարաբաղի հարցը: Կարծում, որ ավելի լավ է այն մնա որպես անկախ պետություն, որպեսզի վերջ դրվեն ազգամիջյան կռիվներին եւ Ադրբեջանի հետ ունեցած վատ հարաբերություններին: Այսպես պայթյունավտանգ իրավիճակ է, ցանկացած պահի կարող է պատերազմ սկսվել, ինչի արդյունքում կրկին ժողովուրդն է տուժելու: Կարծում եմ, որ Հայաստանը բավարար քայլեր անում է խնդիրը լուծելու ուղղությամբ, սակայն ո՛չ մենք, ո՛չ Ադրբեջանը չենք ուզում գնալ փոխզիջումների:

Հասարակության ձայնը, նրա դերը ձեւական բնույթ է կրում. վերջնական որոշումն, այնուամենայնիվ, կայացնում է կառավարությունը:

Ալլախյար, 25 տ., գործարար

Բացի Ղարաբաղի հարցից՝ մեր երկրի արտաքին քաղաքականության առջև ծառայած կարևոր խնդիր եմ համարում տարածաշրջանում կայուն հարաբերությունների հաստատումը, մասնավորապես՝ Ադրբեջան-Թուրքիա, Ադրբեջան-Իրան, Ադրբեջան-Ռուսաստան շփումներում...

Ղարաբաղի չլուծված հիմնախնդիրը վատ ազդեցություն ունի այնքանով, որ ժողովուրդը կարող է կորցնել հավատն իշխանությունների նկատմամբ: Հակառակը կլինի՝ լուծման դեպքում: Անձամբ ես ինձ նվաստացած եմ զգում այս իրադրությունում: Հարցի լուծումը հնարավոր համարում եմ միայն ճիշտ քաղաքականության դեպքում՝ չբացառելով պատերազմական գործողությունների վերսկսման հավանականությունը, չնայած այդ տարբերակը վատթարագույնն է եւ քիչ իրատեսական:

Ադրբեջանի իշխանությունների քաղաքականության հետ դեռեւս համաձայն եմ: Ադրբեջանական հասարակությունը պետք է հասկանա եւ սատարի պրեզիդենտ Էլիամ Ալիևի վարած քաղաքականությանը:

Հեղինե Արզումանյան, 20 տ., մարզիկ

Արդիական եմ համարում Թուրքիայի հետ ունեցած տարաձայնություններին, ցեղասպանության հարցին դրական լուծում տալը: Նաեւ՝ Ղարաբաղի հիմնախնդիրը: Քանի որ Ղարաբաղի ազատագրման համար բազմաթիվ զոհեր ենք ունեցել, ճիշտ եմ համարում, որ այն միանա Հայաստանին:

Այս հարցի հետ կապված որոշումներ ընդունելու բեռն ամբողջովին թողնում եմ իշխանության վրա, ինքս լուծման տարբերակ չունեմ: Կատարվող քայլերը բավարար չեն համարում: Կարող են դիմել ավելի հզոր պետությունների աջակցությանը:

Երկրի առջև ծագած յուրաքանչյուր հարցի լուծման գործում ժողովուրդը մեծ դեր կարող է ունենալ: Սոցիալական հարցումների միջոցով պետք է իմանալ ժողովրդի առաջարկած տարբերակները տվյալ հարցի վերաբերյալ:

Ակիֆ, 18 տ., ուսանող

Ղարաբաղի խնդիրը եւ զբոսաշրջության զարգացումը. աշխարհին Ադրբեջանի ռեսուրսների հետ ծանոթացնելը առաջնային եմ համարում արտաքին հարաբերություններում:

Ղարաբաղի հիմնախնդրի չլուծված լինելը ոմանց վրա վատ է ազդում, ոմանք էլ դա անգամ չեն էլ գիտակցում: Չեմ ուզում, որ կրկին պատերազմ լինի: Մարդիկ նոր-նոր սկսում են ապրել, եւ նոր ավերածություններն անթույլատրելի

են: Հակամարտության խաղաղ կարգավորման համար պետք է, որ այդ գործընթացում ներգրավված լինեն նաև երկու երկրների հասարակությունները:

Լիոլին համաձայն եմ կառավարության վարած արտաքին քաղաքականության հետ:

Մեզ մոտ կայունություն կա: Նայեք Վրաստանին. Աստված գիտի, թե ինչ է կատարվում այնտեղ:

Երանուհի Յարայան, 19 տ., բուժքույր

Ցեղասպանության հարցն եմ անչափ կարեւորում. եթե Թուրքիան ընդունի այն, հնարավորություն կստանանք Արեւմտյան Հայաստանը ետ բերելու:

Ղարաբաղի հիմնախնդրի կապակցությամբ կոնֆլիկտը երկու երկրների իշխանությունների մեջ է, արդյունքում տուժում է հասարակ ժողովուրդը: Ավելի գերադասելի է, որ Ղարաբաղը մնա առանձին պետություն: Եթե պետք է ընտրություն կատարել Ղարաբաղի Հայաստանի կազմում լինելու եւ պատերազմի միջեւ՝ դա լուծման միակ տարբերակն էմ համարում:

Համարում եմ, որ հասարակության դերը պետք է որոշիչ լինի, ինչ քայլեր էլ որ կառավարությունը ձեռնարկի: Ես էլ, որպես հասարակության մի մասն, ունեմ իմ դերակատարությունն այս գործընթացում:

Լալա, 24տ., լրագրող

Ադրբեջանի համար կարեւոր եմ համարում ինչպես Ղարաբաղի հիմնահարցի լուծումը, այնպես էլ՝ նավթի վաճառքն ու դրա կայուն գինը համաշխարհային շուկայում եւ արեւելյան երկրների հետ կապերի զարգացումը: Հիվանդագին եմ տանում Ղարաբաղյան հակամարտության չլուծված լինելը: Միլիոն փախստական: Այդ մարդիկ հիմնականում գյուղացիներ են: Նրանք ուզում են վերադառնալ իրենց տներն՝ այնտեղ, որտեղ ապրել են, որտեղ թաղված են իրենց նախնիները:

Այս հարցը պետք է խաղաղությամբ լուծվի: Կարծում եմ, որ մեր կառավարությունը կանի այն ամենը, ինչ հարկավոր է դրա համար: Միայն պետք է մի քիչ սպասել: Մեր հաջորդ սերունդը մեզնից շատ ավելի ուժեղ կլինի եւ ստեղծված իրավիճակից ելք կգտնի: Ոչ բոլոր կարեւոր հարցերն են ճակատամարտում լուծվում: Երբեմն ամեն ինչ խաղաղ եւ անաղմուկ է արվում:

Հիմա բանակցություններ են ընթանում եւ, հնարավոր է՝ խնդրի լուծման այս փուլի համար դա էլ մեծ խթան է: Մնում է միայն հուսալ եւ սպասել: Հասարակությունը պետք է համբերատար եւ համերաշխ լինի իր կառավարության հետ, փորձի հասկանալ եւ ընդունել այն, ինչ կատարվում է:

Մեռակ Մնացականյան, 23 տ., տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ

Հայաստանի արտաքին քաղաքականության համար ամենաառաջնային հարցերից մեկը համարում եմ գենդիդի հարցը. 1,5 մլն անմեղ զոհերի արյունը չպետք է անպատիժ մնա: Դե, իսկ Ղարաբաղյան կոնֆլիկտն, իհարկե, բացասական ազդեցություն թողնում է մեզ վրա: Եթե ուրիշ ոչինչ չլիներ էլ, դրա պատճառով Հայաստանը երկկողմանի շրջափակման մեջ է արդեն երկար տարիներ:

Լուծման միակ միջոց համարում եմ փոխզիջումների գնալը: Կառավարության կողմից տարվող քաղաքականությունն այս ուղղությամբ համարում եմ բավարար, քանի որ որոշակիորեն պահպանվում է խաղաղությունն ու սահմանի խախտման դեպքեր հաճախ չեն արձանագրվում:

Հասարակության դերն, առաջին հերթին տեսնում եմ այն բանում, որ հայերս խտրականություն չդնենք Հայաստանում բնակվողների եւ Ղարաբաղում բնակվողների միջեւ: Նաեւ սփյուռքի աջակցությունն օգտակար կլինի խնդրի լուծման համար: ԼՂՀ-ն պետք է ունենա շատ լավ բանակ, քանի որ պետության դեմքը հզոր բանակն է: Ինքս Հայաստանի քաղաքացի լինելով՝ պատրաստ եմ պայքարել Ղարաբաղի անկախության համար, եթե պատերազմի անհրաժեշտություն ծագի:

Լամիյա, 23 տ., իրավաբան - Կայունություն տարածաշրջանում եւ Արեւմուտքի վրա քաղաքական ազդեցության ավելացում. սրանք եմ կարելորդում: Իսկ Ղարաբաղի հարցն այժմեական չեմ համարում: Այն վաղուց էր պետք լուծել: Պարզապես հասարակությանը խաղացնում են մատերի վրա, ինչը շատ բացասական ազդեցություն է թողնում նույն հասարակության վրա:

Մենք այնպիսի դարաշրջանում ենք ապրում, երբ չի կարելի հարցերը ռազմական գործողությունների միջոցով լուծել: Տեսեք, թե ինչ արեցին Գազայում, Պաղեստինում, արդեն քանի տարի է այնտեղ պատերազմ ընթանում... Մեր մեղքն է, որ ժամանակին չպայմանավորվեցինք: Պատերազմը Ղարաբաղում հարկավոր չէ ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ մեզ: Այստեղ ուրիշ հետաքրքրություններ են...

Ես կողմ եմ պրոգրեսին, քաղաքակրթությանը, զարգացմանը...

Արաքսյա Սաքայան, 23 տ. - Կարելորդում եմ ինչպես Ղարաբաղի հիմնախնդիրը, այնպես էլ Եղեռնի ճանաչման հարցը: Թե՛ մեկը, թե՛ մյուսն իր բացասական ազդեցությունն ունի: Ղարաբաղի հակամարտության լուծված չլինելը բազում մտավախություններ է առաջացնում ժողովրդի շրջանում, այդ թվում՝ Ղարաբաղը կորցնելու:

Խնդրի լուծման ընտրությունը եւ թողնում եմ կառավարության հայեցողությանը: Սակայն իմ կարծիքով՝ Հայաստանը բավականաչափ ակտիվ չէ այս հարցում: Պետք է մշակել այնպիսի մեթոդներ, որ երկու պետություններն էլ՝ Հայաստանը եւ Ադրբեջանը, վնաս չկրեն: Փոխզիջումներ են պետք. պետք է Ադրբեջանին վերադարձնել իրեն պատկանող, Ղարաբաղի կազմի մեջ չմտնող տարածքներն ու, ըստ այդմ, հարցին խաղաղ լուծում տալ:

Նիզյար, Բաքվի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

Ղարաբաղի խնդիրն եմ կարելորում: Եւ, որ չխառնվենք իրանա-ամերիկյան հարաբերություններին: Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ճանապարհը տեսնում եմ միայն խաղաղ կարգավորման միջոցով: Մտածում եմ, որ ռազմական գործողություններն այլեւս չեն վերսկսվի եւ ինքս էլ դեմ եմ դրանց:

Ճիշտ է, սատարում եմ մեր կառավարության գործողություններին, բայց գործընթացը չափից ավելի դանդաղ է ընդանում եւ դրանում մեղավորը հայկական կողմն է: Դա ձեռնտու է Հայաստանի կառավարությանը:

Լիանա Բաղդասարյան, 23տ., ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտ

Կարելոր եմ համարում Հայաստանի անդամակցելը Եվրամիությանը, դիվանագիտական հարաբերությունների քարտեզի ընդլայնումն ու Ղարաբաղի Հանրապետության հարցի լուծումը: Վերջինը կրերի Հայաստանի ռազմական հզորացման, կրնդարձակվեն սահմանները, ինչպես նաեւ կնվազի ադրբեջանաթուրքական վտանգը: Ներկա վիճակի բացասական հետեւանքն այն է, որ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները սառեցված են: Սա իր հերթին՝ հարվածում է երկրի տնտեսությանը:

Կառավարության քայլերն Ղարաբաղի հարցի լուծման ուղղությամբ անբավարար եմ համարում, որովհետեւ Հայաստանի տարած ռազմական հաղթանակից հետո ոչ մի դրական տեղաշարժ չի եղել:

Իսկ հասարակության ձայնն այս հարցում վճռորոշ եմ համարում: Ես էլ այդ հասարակության մի մասնիկն եմ:

Հասան, 23 տ., բանկի աշխատող - Ղարաբաղյան չլուծված կոնֆլիկտը ավելի մեծ ազդեցություն է թողնում փախստականների կյանքի վրա: Անձամբ ես այդ կոնֆլիկտի պատճառով երբեմն թերարժեքության զգացում եմ

ունենում: Չնայած դրան՝ խնդրի լուծումը տեսնում եմ միայն խաղաղ ճանապարհով: Չեմ կարծում, որ պատերազմ կարող է լինել: Համենայն դեպս, չի կարելի դա այլևս թույլ տալ: Դեմ եմ պատերազմին: Եւ կողմ եմ խնդրի լուծման ուղղությամբ մեր կառավարության տարած քաղաքականությանը:

Արփինե Ռուբենյան, 20տ., օտար լեզվի մասնագետ

Հակամարտության կարգավորման խաղաղ ճանապարհին, ըստ իս, այլընտրանք չունի, բայց մի պայմանով՝ բանակցություններին պարտադիր պետք է մասնակցի Ղարաբաղի ժողովուրդը: Հասկանում եմ, որ Ղարաբաղի ժողովուրդ ասելով՝ պետք է նկատի ունենալ նաեւ մինչեւ կոնֆլիկտի սկիզբն այս տարածքում բնակվող ազգությամբ ադրբեջանցիներին, սակայն դա նշանակություն չունի ինձ համար, եթե նրանք այժմ այստեղ չեն ապրում:

Հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունից քիչ եմ տեղյակ: Ճիշտն ասած, հետաքրքրված էլ չեմ:

Մեր սահմանադրական իրավունքն ընտրություններում իրացնելով՝ մենք ընտրել ենք քաղաքական գործիչների, ինչը նշանակում է, որ պետք է նաեւ ընդունենք նրանց կայացրած որոշումները: Այսքանով՝ հասարակության դերը սահմանափակվում է:

Ֆաիկ, 25 տ., Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտ

Ղարաբաղյան հակամարտությունը օրակարգային չեմ համարում Ադրբեջանի համար: Օրակարգայինն, իմ կարծիքով, Կովկասում կայուն վիճակի հաստատումն է, դա է Ադրբեջանի համար գերակա խնդիրը: Կարելու է եւ համարում նաեւ Արեւմուտքի հետ կայուն հարաբերություններ ունենալը՝ այնպես, ինչպես Կովկասի մյուս երկրների՝ Հայաստանի եւ Վրաստանի, հետ ակտիվ քաղաքական կապերն ու համագործակցությունը:

Ղարաբաղի հակամարտության պատճառով հասարակությունն ապրում է ատելությամբ եւ սպասումով, եւ դա էլ խանգարում է նրա զարգացմանը: Մարդիկ մինչեւ հիմա անցյալով են ապրում... Խնդրի լուծման շատ ճանապարհներ կարող են լինել, բայց Հայաստանի ներկայիս իշխանությունների հետ այն խաղաղ ճանապարհով լուծել հնարավոր չէ: Ամեն ինչ հնարավոր է, այդ թվում նաեւ՝ պատերազմ, բայց հույս ունեմ, որ մենք (Հայաստանն ու Ադրբեջանը) այժմ շատ ավելի խելացի ենք, քան 1988-ին: Պատերազմը խելագարություն է, որի կրկնություն չպետք է թույլ տալ: Եւ հասարակությունն ինքն էլ այս ուղղությամբ շատ բան կարող է անել, բայց, ցավոք, ուրիշ բաներով է զբաղված:

Վահե Մարտիրոսյան, 20 տ., օտար լեզուների բաժնի ուսանող -

Վրաստանում միջազգային ծրագրի էի մասնակցում, որին ադրբեջանցիներ էլ կային ու անհնար էր խուսափել քննարկումից: Այդ ժամանակ ադրբեջանցի երիտասարդներից մեկն ասաց՝ «Ինչ եղել, եղել է: Մենք նոր սերունդ ենք ու կարող ենք իրար հետ լավ հարաբերություններ ունենալ»: Բայց նույն մարդը, ինչպես հետո պարզվեց, ինտերնետում, Facebook-ում վիրտուալ պատերազմներ էր վարում հայերի դեմ: Փուչ էին իր ասածները:

Ղարաբաղի հարցի չլուծված լինելը միանշանակ վատ է ազդում Հայաստանի, հետեւաբար՝ մեր հասարակության, նաեւ՝ անձամբ ինձ վրա: Եթե հարեւանների հետ չենք համագործակցում, ինչպե՞ս կզարգանա տնտեսությունը: Բյուջեի ահռելի մասը գնում է պաշտպանական ծախսերի համար: Եթե Ղարաբաղն այսքանից հետո Հայաստանի մասը չդառնա, անձամբ ինձ համար վիրավորական կլինի: Այսքան նեղություններ տանելուց հետո պետք է հասնել նպատակին:

Եթե Ադրբեջանը որոշի պատերազմով վերադարձնել Ղարաբաղը, մենք ձեռքներս ծալած չենք նստի: Խնդրի լուծման ճանապարհներ չեմ տեսնում. չե՞ որ իրար հակասող բաներ ենք ուզում միմյանցից:

Որ Հայաստանը դեռ զիջումների չի գնում՝ ողջունելի է: Եթե պետք է զիջեինք՝ մինչեւ հիմա էինք զիջելու, ոչ թե այժմ, երբ անհամեմատ ավելի լավ տնտեսական վիճակում ենք, քան, ասենք, 10 տարի առաջ:

Թե՛ հասարակությունը, թե՛ ես, որպես այդ հասարակության մի մասը, որեւէ դեր չունենք այս հարցում: Մեզ չեն լսում, չնայած երբեւէ չեմ էլ փորձել անպայման ասել իմ կարծիքը: Սա պետական գործընթաց է, որին խառնվել ես չեմ փորձել: Գուցե սխալ է, բայց հասարակության 90 տոկոսն ինձ նման է: Թեեւ գտնում եմ, որ հասարակության ձայնն, անկասկած, պետք է լսվի եւ հաշվի առնվի:

Խալիդա, 22 տ., վաճառողուհի

Ղարաբաղի հիմնախնդրի առկայությունը ոչ մի ազդեցություն չի ունենում հասարակության վրա: Մարդիկ մոռանում են իրենց անցյալն ու պատմությունը:

Առաջ դա ինձ շատ էր հուզում, անզամ ցավ էի զգում: Իսկ հիմա... Լուծման ճանապարհը տեսնում եմ միայն պատերազմով: Ոչ մի անզամ չեմ լսել, որ կոնֆլիկտը հնարավոր լինի խաղաղությամբ, բանակցելով լուծել: Դա անհնար է: Չեմ ցանկանում, որ պատերազմ լինի, բայց այլ ճանապարհ չեմ տեսնում: Գուցե վայրի է հնչում, բայց պետք է ուժով ետ բերել մեր հողերը: Առաջին հերթին՝ ուժեղ բանակ է պետք, ուժեղ տեխնիկա, իսկ այդ միջազգային հանդիպումները, պայմանագրերը անիմաստ եւ անտեղի ժամանակի կորուստ եմ համարում:

Մամվել Խաչատրյան, 23 տ., գործազուրկ

Մեր երկրի առջև ծառայած, արտաքին հարաբերությունների հետ քիչ թե շատ կապ ունեցող խնդիրներից միայն ցեղասպանության հարցին եմ ծանոթ:

Քիչ եմ հետաքրքրվում համազգային հարցերով: Եւ միայն ես չեմ, հասարակությունն, ընդհանուր առմամբ, քիչ է հետաքրքրվում նման հարցերով՝ կա՛մ ինչ-որ տեղ վստահում են կառավարությանը, կա՛մ առավել զբաղված են հացի խնդրով: Ղարաբաղի հարցն արդեն շատերին չի էլ հետաքրքրում, որովհետեւ վերածվել է ամենօրյա ձանձրալի խոսակցության, որի հանգուցալուծումն այդպես էլ չի երեւում: Եթե հանգուցալուծում լինի՝ զուցե նորից սկսի հետաքրքրել:

Կառավարությունն ամեն ինչ է անում, չես կարող ասել, որ անգործ են: Բայց լուրջ առաջընթաց չեմ տեսնում: Եթե դրան են նվիրել իրենց կյանքն ու գործունեությունը՝ թող ավելի ակտիվ լինեն ինչ-որ բանի հասնելու համար:

Ռուֆատ, 19տ., աշխատում է Բաքվի շուկաներից մեկում, արմատներով՝ Ղարաբաղից

Ղարաբաղյան հակամարտությունն եւ միջազգային ֆինանսական ճգնաժամի դեմ արդյունավետ պայքարն եմ կարելորդում: Մինչ հասարակությունն ինչ-որ բանի է սպասում, երիտասարդ սերունդն ամեն ինչ մոռանում է, ես էլ՝ այդ թվում: Չեմ կարծում, որ խաղաղ բանակցություններով հարցը կլուծվի: Կսատարեմ հակամարտության լուծման ուղղությամբ մեր իշխանությունների կողմից ընդունած ցանկացած որոշման: Հնարավոր է, որ պատերազմը կրկնվի: Դե իսկ խաղաղ կարգավորման դեպքում, պետք է այնպես անել, որ հասարակությունը պատրաստ լինի դրան:

Մերի Միքայելյան, 23 տ.

Ղարաբաղի հարցը համարում եմ մեր արտաքին քաղաքականության առջև դրված ամենակարեւոր հարցը: Պատերազմին դեմ եմ, բայց Ղարաբաղը Ադրբեջանին զիջելու փոխարեն կգերադասեմ պատերազմը: Բայց թող բանը դրան չհասնի:



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009